ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵՎ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ

Հոկտեմբերի 7-ին, ուրբաթ առավոտ, Մայր Տաճարում եպիսկոպոսական առաջին պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը։

Հոկտեմբերի 8-ի առավոտ, Մայր Տաճարում, Սրբալույս Մեռոնի օրհնությունից առաջ, եպիսկոպոսական առաջին պատարագը մատուցեց Կալիֆորնիայի առաջնորդ գերաշնորհ Տ. Շնորհք եպիսկոպոս Գալստյանը։

Հոկտեմբերի 9-ին, կիրակի առավոտ, Մայր Տաճարում, եպիսկոպոսական առաջին պատարագը մատուցեց Արևմտյան Եվրոպայի Հայոց Կաթողիկոսական պատվիրակ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը։ Պատարագիչ սրբազանը իր շատ գեղեցիկ քարոզովը ձեռնհասորեն բացատրեց Ս. Մեռոնի և Սրբոց Թարգմանչաց տոնի նշանակությունները հայ հավատացյալ ժողովրդի համար։

Հոկտեմբերի 11-ին, երեքշաբթի առավոտ, Մայր Տաճարում պատարագեց բարձրապատիվ Տ. Հմայակ վարդապետ Ինթոյանը (Հյուսիսային Ամերիկայից)։

Հոկտեմբերի 12-ին, չորեքշաբթի առավոտ, պատարագեց բարձրապատիվ Տ. Բաբգեն վարդապետ Վարժապետյանը (ԱՄՆ-ից)։

Հոկտեմբերի 13-ին, հինգշաբթի առավոտ, պատարագեց իտալահայոց հոգևոր հովիվ բարձրապատիվ Տ. Զգոն վարդապետը։

Հոկտեմբերի 16-ին, կիրակի օր, պատարագեց և քարոզեց Կիլիկիայի Կաթողիկոսության միաբաններից հոգեշնորհ Տ. Գնել ծ. վարդապետ Ճերեճյանը։

ՆՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ

Հոկտեմբերի 22-ի շաբաթ երեկոյան ժամերգությունից հետո, Մայր Տաճարում, հանդիսավոր արարողությամբ ծայրագունության աստիճան ստացավ Կիլիկիայի Կաթողիկոսության Դամասկոսի թեմի Կաթողիկոսական փոխանորդ, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ուխտի միաբան բարձրաշնորհ Տ. Շավարշ վարդապետ Գուլումճյանը։ Տվչությունը կատարեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Խարտավիլակն էր բարձրաշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։

Հաջորդ օրը, 23 հոկտեմբերի կիրակի առավոտ, Մայր Տաճարում, հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոս և Մայրագույն Պատրիարք Վեհափառ Տ. Տ. Վազգեն Ա.ի ձեռքով եպիսկոպոս ձեռնադրվեցին և օծվեցին Տ. Շավարշ ծայրագույն վարդապետ Գուլումճյանը (Դամասկոս—Սիրիա) և Տ. Պսակ ծայրագույն վարդապետ Թումայանը (Լոնդոն—Անգլիա)՝ խարտավիլակությամբ Տ. Սահակ եպիսկոպոսի։

Վեհափառ Հայրապետը երկու նորաօծ եպիսկոպոսներին ուղղյալ խրատականում նշեց այն կարևոր դերը, որը կատարելու կոչվում էին նրանք հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու ծոցում՝ և՛ որպես եպիսկոպոս, և՛ որպես առաջնորդ, առաջինը Սիրիական պետության մայրաքաղաք Դամասկոսում, երկրորդը՝ Բրիտանական կայսրության մայրաքաղաք Լոնդոնում։

Եպիսկոպոսական ձեռնադրության և հայրապետական պատարագին ներկա եղող հավատացյալների սրտերը ուրախությամբ էին ցնծում ի տես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նոր ուժերով հզորացման։

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԱՐԱԳ

Հոկտեմբերի 24-ին, երկուշաբթի առավոտ, Մայր Տաճարում, եպիսկոպոսական առաջին պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս Թումայանը։ Պատարագի արարողություններին մասնակցեց Հոգևոր

Ճեմարանի ամբողջ ուսանողությունը։ Պատարագիչ սրբազանը քարոզեց մտքի ու հոգու լույսի մասին։

ԱԲԵՂԱՅԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԱՐԱԳ

Հոկտեմբերի 27-ին, հինգշաբթի առավոտ, Մայր Տաճարում աբեղայական առաջին պատարագը մատուցեց հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաջիրյանը։ Պատարագի արարողություններին մասնակցեցին Հոգևոր Ճեմարանի ուսանողները։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ

Ամենայն Հայոց Հայրապետի և Հովվապետի ընտրության և օծման, եպիսկոպոսական ձեռնադրությունների և Սրբալույս Մեռոնի օրհնության կապակցությամբ արտասահմանյան բազմաթիվ երկրներից Հայաստան ժամանած ուխտավորներն ու պատգամավորները վերադարձան իրենց տները՝ տանելով իրենց հետ անմոռանալի հիշատակներ։

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 30-ին, շաբաթ առավոտ, Մայր Տաճարում, գերաշնորհ Տ. Սահակ Եպիսկոպոսի ձեռամբ սարկավագ ձեռնադրվեց բնիկ Պաղչեցի (Ամանոս —Կիլիկիա) Հրայր Կարագյոզյանը։ Պատարագիչն էր Տ. Հակոբ քահանան։ Իսկ հաջորդ առավոտ, կիրակի, Մայր Տաճարում եպիսկոպոսական առաջին պատարագը մատուցանող գերաշնորհ Տ. Շավարշ եպիսկոպոս Գույումճյանի ձեռամբ հոգեշնորհ Հրայր սարկավագը ձեռնադրվեց քահանա։ Նորընծան Կիլիկիայի Դպրեվանքի սաներից է, աշակերտած է նաև Ընծայարանին։